



Ղևոնդ Ալիշան

Պլպուլն Ավարայրի

Ո՞նց գաս, իմ լուսնակ, հեգիկ ու հանդարտ
Համասփյոռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի նահապետս, որ մըտոք մուլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աննըման հարք մեր հայկազունը
Ընկան գետ հրսկա, կանգնեցան զվարթունք.
Միթե՞ գա՞ս սըփռել ոսկերաց սրբոց
Ձյունափայլ ամպեղ ոսկեթել ծածկոց,
Թե՞ ճերմակ ճակտիդ՝ թեպետ և պայծառ
Քաջացս արենեն կատե՞ս կարմիր վառ.
Թե՞ լրդիկ-մընջիկ ափշի՞ս տակավին,
Թե՞ ի՞նչպես ընկավ Վարդանն ահագին,
Մահու սև ըստվերն ի սիրտ թըշնամյաց,
Զհոգին ձրգելով յերկին առ աստված:
Դու այլ, ո՛վ Տրդմուտ, տրտում ու արյունոտ,
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուդ.
Եվ հովիկդ, որ գաս ի Մակվա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սրբազան սարեն.
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թույլ թևոք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառն անտառ, տերևն տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընջիս վերջին հառաչանք

Ձրգել ի Հայոց սրբոց արձագանք:
Ո~հ դու բարեկամ այրած սրբներու,
Խոսնակ գիշերո, հոգյակ վարգերու,
Երգե՛ պրլպուլիկդ, երգե՛ ի սարեդ,
Չանմահ քաջքն Հայոց երգե՛ հոգվոյս հետ.
Թաղեի վանուց ձենիկդ ինձ դիպավ,
Սրբոցիկս, որ ի խաչն էր կիպ, թունտ առավ.
Ի խաչին թնն թրոս ու հասա,
Գլտա գքեզ ի դաշտ քաջին Վարդանա:
Պրլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թե չէ հավ՝ պրլպուլ մեր Ավարայրին,
Եղիշյա հոգյակն է քաղցրագրուցիկ,
Որ գՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Ջըմնոն յանապատ կու գնա կա ի լաց,
Գարունն յԱրտագ գա ի թուփ վարդենյաց,
Երգել ու կանչել յԵղիշեին ձայն
Թե պատասխանիկ մ'արգյոք տա Վարդան:
Թե կիսահոգի պրլպուլիս նըման
Ձենիկս հասնի ձեզ, որդի~ք Թորգոմյան,
Որդի~ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին գդաշտեր, գըրքեր ու գերկինք.
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ'արունիկ
Կա թե Հայ աղբյուրըն կամ Պահլավիկ,
Թե գփառքն հայրենյաց ձեզ այլ գըրեք փառս,
Հետ նահապետիս ելեք ի յԱրտագ: